էր Բարգուշատի (Բերգուշետի) լեռնաբազուկի վրայով, այժմյան Վերին և Ներքին Գիրաթաղ գյուղերով և Գյազբուլ՝ այժմ Կազբեկ գագաթի տակով, դեպի Տաթև՝ այնտեղից դեպի Սատանի կամուրջն իջնելու և Եռաբլրի (Ուչթափալարի) սարահարթով Շահիյուլի հետ միանալու համար և ապա Շամախի—Դերբենդով հասցնում էր Վոլգայի ափերի տափաստաններին[37]։

Այդ մեծ տարանցիկ ճանապարհի վրա՝ Սատանի կամուրջը անցնելուց հետո Օրբելյան իշխանները խնամքով տաշած քարերով շինել են գեղեցիկ քարվանսարա, որն իր ավերակ վիճակի մեջ այժմ էլ պահպանում է իր նախկին գեղեցկության նշանները։ Այդտեղ պատսպարվում էին ճանապարհորդները Եռաբլրի (Ուչթափալարի) վրա, մանավանդ ձմեռը, իշխող քամիներից և խորը ձյան տակ թաղվելու վտանգից։ Փոթորկի ժամանակ ճանապարհը շկորցնելու համար սարահարթի վրա կանգնեցրած էին բարձր սյունանման քարակույտեր։ Մինչև այսօր էլ նրանք նույն նպատակին են ծառայում։

Բաղաբերդից անհամեմատ ավելի լավ է պահպանվել նույն ձորում Հալիձորի բերդը, այժմյան Բեխ գյուղից հազիվ 4—5 կմ հեռու դեպի արևմուտք։ Այդտեղ մնացել են և՛ ամրությունները, և՛ բնակարանային շենքերը, և՛ մելիքական տնային եկեղեցին։ Կառուցողը դիմել է հին տեղական տեխնիկային—անտաշ քարերը նա առանց շարք-շարք դասավորելու, հարմարվելով միայն քարերի մեծությանը, միաձուլել է ամուր կիր ու սվաղով անքակտելի զանգվածների։ Այդտեղ դեռ զգացվում է նախկին բնակիչների կենդանի շունչը... Մեռելությունը դեռ չի տիրապետել բոլոր անկյուններին։ Զգացվում է, որ մելիքական տունը դեռ նոր է թողել իր այդ տոհմային բունը և տեղափոխվել տնտեսության համար ավելի ընդարձակ հարմարություններ ընձեռող Բեխ գյուղը, որտեղ ավելի ազատ կարող էին տեղավորվել թե՛ իրենց տան բազմացած անդամները և թե՛ մելիքական տան հետ սերտորեն կապված գյուղացի ընտանիքները։

Հալիձորի Մելիք-Փարսադանյանների բերդը կառուցված է մի կարճ լեռնաբազուկի արևելյան լանջի բարձր մասում։ Առջևից մի ձորակ բավական զառիթափ իջնում է դեպի Ողջի (Օխչի) գետը՝ ծառայելով բերդի համար որպես բնական խրամատ։ Լեռնաբազուկի հակառակ կողմը չափազանց դժվարելանելի է։ Պարիսպները հարմարվել են լանջի տեղագրական պայմաններին։ Արևելքից և հարավից նրանք ձգվում են ուղիղ գծերով՝ իրար հետ միանալիս կազմելով մի փոքր սուր անկյուն։ Արևմտյան և հյուսիսային պարիսպները գրեթե մեկ ընդհանուր աղեղով պարփակում են հրապարակը, որը այսպիսով ստանում է անկանոն եռանկյունու ձև։ Մի աշտարակ կապում է հարավային և արևմտյան պարիսպները իրար հետ։ Բերդի մուտքը հարավային պատի մեջն է։ Արևելյան պատը բերդի ներսից լցված է հողով, որով նա թե՛ ավելի հաստություն է ստանում և թե՛ դյուրացնում է պաշտպանողների համար բռնելիք դիրքի ընտրությունը, իսկ դրսից նա կրծքով շեշտակի իջնում է խորը ներքև

---

[37] Ոչ հեռու այնտեղից, որտեղ այդ ուղին կտրում է Գեղվա գետի բերանը, այդ գետի աջ և Ողջի (Օխչի) գետի ձախ ափերի միջև գոյացած լեզվանման հրապարակի վրա գտնվում էր Բաֆֆու «Դավիթ Բեկ» վեպի մեջ նկարագրած Զեյվան, որից այժմ պահպանվել են միայն հողակույտեր, ոչ մի հին ամրության հետք չի պահպանվել... Մի երկար հողածածկ բլրագիծ աղոտ գաղափար է տալիս եղած ամրությունների դասավորության մասին։ Եթե մի երկու-երեք տասնամյակ առաջ այստեղ թափթփված են եղել կառուցումներից մնացած քարեր, այն էլ հավաքել՝ գործադրել են իրենց խրճիթների համար նորերս այդտեղ հիմնված թրքական փոքրիկ գյուղի բնակիչները։